թիւնը մերկացոէր մեր մօտ, գուցէ նա մեզ այնքան անփորձ էր համարում, որ չէր կարող հաւատալ մեզ իր գաղտնիքները, որ նա պէտք է ծառայեցնէր մեզ բոլորովին անյայտ նպատակների:

Առժամանակ մտածելուց յետոյ, նա խօսեց.

— Ես չեմ զարմանում գործերի այսպէս լինելու մասին, այլ ցաւում եմ, որովհետեւ ամէն ժամանակ, երբ հայի համար որեւիցէ դաւաճանութիւն է պատրաստւում, նրա մէջ խառն է լինում դարձեալ նոյնիսկ հայի մատնիչ ձեռքը: Դա մի պատմական եղեռնագործութիւն է, որ սկսեալ ամենահին դարերից, խիստ յաճախ կրկնոել է մեր ազգի կեանքում: Դա հայի վա՛տ յատկութիւններից մէկն է...

Ես առաջին անգամ տեսնում էի Ասլանին երկար խօսելիս. նա առհասարակ լուռ եւ ծածկամիտ երիտասարդ էր: Բայց նրա խօսելու ձեւը շատ տարբեր էր Կարօյից: Կարօն ժողովրդի որդի էր. նրա խօսքերն անտաշ էին եւ պարզ, բայց նրանց մէջ ուժ եւ զօրութիւն կար, նրանք ազդում էին աւելի մարդու սրտի վրայ: Ասլանը ժողովրդի կրթուած որդին էր, նրա խօսքերը կոկուած էին եւ գեղեցիկ, ազդում էին աւելի մարդու մտքի վրայ:

Նա շարունակեց.

— Թէ ի՞նչ հետեւանք կ'ունենայ մեր ձեռնարկութիւնը, մենք այժմեն նախագուշակել չենք կարող, միայն վստահ ենք նրա յաջողութեան մէջ, որովհետեւ մենք հետեւում ենք բնութեան ընդհանուր օրէնքներին: Թէ բնութեան մէջ եւ թէ մարդկային կեանքում ոչինչ բան առանց պատճառի չէ կատարւում: Մենք տեսնում ենք, ամէն մի ճնշուած եւ սահմանափակուած զօրութիւն որքան աւելի սեղմւում է, այնքան աւելի զարգանում է նրա մէջ ընդդիմահարութեան ուժը: Այնուհետեւ նա պիտի պայթի, նա պիտի խորտակէ իրան սահմանափակող պատոարը եւ իր բնական ազատ ծաւալականութեանը պիտ հետեւի: Ժողովուրդը, ամբոխը նոյնպէս մի զօրութիւն է: Նա երկար չէ կարող համբերել իրան ճնշող եւ ստրկացնող կոպիտ ձեռքին: Նա վերջապէս պիտի խլրտի, պիտի խորտակէ իր շղթաները եւ պիտի թօթափէ բռնակալի լուծը: Ոռպէն հասել է... այս դրութեան մէջն է այժմ մեր ժողովուրդը:

— Քեռի Պետրոսները, տէր Թոդիկները, — շարունակեց նա, — ժողովրդի անհարազատ որդիքն են. նրանք կտրուած են ընդհանրութիւնից, որովհետեւ իրանց եսական շահերին են ծառայում: Նրանց թիւը փոքր չէ, եւ աւելի ցաւալին այն է, որ նրանք ժողովրդի առաջնորդող մասն են կազմում: Ահա այստեղ է մեր դժբախտութիւնը: